ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2022 թվականի N _____Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասը և ՀՀ վարչապետի 2022 թվականի օգոստոսի 18-ի թիվ 948-Ա որոշման հավելվածի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել

Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց բնակարանային ապահովման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի _____-ի

N - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

1. **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**
2. ՀՀ-ում ապաստան հայցող անձանց թիվը տարեկան միջինում կազմում է շուրջ 270 անձ: Այդ թիվն առանձին տարիներին՝ տարածաշրջանում առկա հակամարտություններով պայմանավորած աճում է: Այսպես՝ սիրիական ճգնաժամի հետևանքով 2012թ.-ին ՀՀ-ում ապաստան հայցող անձանց թիվը հասել է 579-ի, իսկ 2013-ին՝ 320-ի: Ակնհայտ է աճի միտումը նաև 2022թ.-ին՝ Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով: 2022թ. առաջին 6 ամիսների ընթացքում արդեն Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց են ներկայացրել 320 անձինք, որոնցից 213-ը Ուկրաինայի քաղաքացիներ են:
3. ՀՀ-ում տարեկան միջին հաշվով փախստական են ճանաչվում և ապաստան են ստանում շուրջ 150 անձինք: Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձինք հանդիսանում են ինտեգրման քաղաքականության նպատակային հիմնական խմբերից մեկը: Նրանց ինտեգրման տեսանկյունից ամենակարևորը Հայաստանում ժամանակավոր բնակության համար կացարանի խնդրի լուծումն է, քանի որ այդ անձինք փախստական ճանաչվելուց հետո հնարավորություն չունեն ինքնուրույն լուծել իրենց կացարանի հարցը, նրանց անհրաժեշտ է որոշակի ժամանակ հայոց լեզուն սովորելու և աշխատանք գտնելու համար, որից հետ միայն նրանք կարող են քայլեր ձեռնարկել կացարանի ձեռք բերման ուղղությամբ:
4. Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և

փախստական ճանաչված անձանց կացարանի խնդիրը մասամբ լուծվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման ենթակա սոցիալական տներում (այսուհետ՝ Սոցիալական տներ) նրանց ժամանակավոր կացարան տրամադրելու միջոցով: Սոցիալական տներում իրատեսական է բնակեցնել նշված 150 անձանց մեկ երրորդին, իսկ մնացած 100 անձի (շուրջ 40 ընտանիք) համար կացարանով ապահովումը հնարավոր է իրականացնել բնակարանի վարձակալության փոխհատուցման միջոցով:

5. Ծրագրի նպատակն է, Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված՝ ժամանակավոր կացարանի սուր խնդիր ունեցող և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց Սոցիալական տներում բնակեցնելու անհնարինության դեպքում, բնակարաններ վարձակալելու համար փոխհատուցման տրամադրման ճանապարհով, նպաստել այդ անձանց բնակարանային հիմնախնդրի լուծմանը:

2. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**
3. Սույն ծրագրով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց բնակարաններ վարձակալելու համար փոխհատուցման (այսուհետ՝ փոխհատուցում) տրամադրման հետ կապված հարաբերությունները:
4. Փոխհատուցումը տրամադրվում է Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց ժամանակավոր կացարանով ապահովման խնդրի լուծման նպատակով՝ 6 ամիս ժամկետով: Նշված ժամկետով աջակցության տրամադրման նպատակն է հնարավորություն տալ Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց, 6 ամիսների ընթացքում սովորել լեզուն, լուծել իրենց զբաղվածության հետ կապված հարցերը՝ այդ ժամկետը լրանալուց հետո կացարանի խնդիրն ինքնուրույն լուծելու նպատակով:
5. Փոխհատուցման տրամադրման շահառուների ընտրության հայտանիշներն են.

1) Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված լինելը.

2) ընտանիքի անդամներից առնվազն մեկի ինքնասպասարկման ունակություն ունենալը.

3) սեփականության իրավունքով բնակելի տարածություն չունենալը, և վերջին տասը տարում ՀՀ-ում բնակելի տարածություն օտարած չլինելը.

4) ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում հաշվառված լինելը և անապահովության 0-ից բարձր միավոր ունենալը.

5) ստանալու պահին կացարանով ապահովման որևէ պետական ծրագրում,

ինչպես նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից կացարանով ապահովման որևէ ծրագրում ընդգրկված չլինելը:

3. **ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
4. Փոխհատուցում ստանալու համար Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձը, իսկ ընտանիքի առկայության դեպքում, ընտանիքի չափահաս անդամներից մեկը (այսուհետ՝ դիմող) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն (այսուհետ՝ ծառայություն) է ներկայացնում դիմում, համաձայն N1 ձևի:
5. Դիմումին կից ներկայացվում են նաև ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերը և ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում հաշվառված լինելու և անապահովության 0-ից բարձր միավոր ունենալու վերաբերյալ տեղեկանքը:
6. Ծառայությունը դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելու հաջորդ օրը պարզում է դիմողի Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված լինելու հանգամանքը, որից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում հարցում է ուղարկում Կադաստրի կոմիտե՝ դիմողի և նրա ընտանիքների անդամների անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման, ինչպես նաև վերջին տասը տարում ՀՀ-ում բնակելի տարածության օտարման մասին տվյալներ ստանալու նպատակով: Եթե դիմողը առանց ուղեկցողի, կամ ընտանիքից անջատված, կամ «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հատուկ կարիք ունեցող անձ է, երկու աշխատանքային օրվա ընթացքում հարցում է ուղարկվում նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, դիմումատուի՝ հատուկ հաստատությունում տեղավորված լինելու փաստը պարզելու նպատակով: Միաժամանակ հարցում է ուղարկվում Հայաստանում տվյալ ոլորտում գործունեություն ծավալող միջազգային և հասարակական կազմակերպություններին, իրենց կողմից վարվող ծրագրերի շրջանակներում դիմողին բնակարան վարձակալելու նպատակով փոխհատուցման տրամադրման, կամ այլ կացարանով ապահովման փաստը պարզելու նպատակով: Նշված կազմակերպությունները հարցումն ստանալուց հետո պատասխանում են յոթ աշխատանքային օրվա ընթացքում:
7. Կադաստրի կոմիտեն հարցումն ստանալուց հետո պատասխանում է յոթ աշխատանքային օրվա ընթացքում, բացի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի:
8. Դիմումը ենթակա չէ բավարարման եթե.

1) դիմողը հրաժարվել է տեղավորվել Սոցիալական տներում.

2) դիմողը որպես առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված կամ «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հատուկ կարիք ունեցող՝ իրավասու մարմինների կողմից տեղավորվել է այնպիսի հաստատությունում, որտեղ ապահովվում են նրա կենսաապահովման հիմնական կարիքները.

3) դիմելու պահին դիմողը Հայաստանում գործող միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից բնակարան վարձակալելու նպատակով փոխհատուցում է ստացել կամ տեղավորվել է կացարանում.

4) դիմողը տեղավորվել է Սոցիալական տներում.

5) դիմողի տվյալները չեն բավարարում սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված շահառուների ընտրության հայտանիշներին.

6) դիմողն արդեն մեկ անգամ օգտվել է սույն ծրագրից

7) դիմողի ինքնասպասարկման ունակության հետ կապված խնդիրներ ունենալու վերաբերյալ առկա են ապաստանի ընթացակարգի ժամանակահատվածում հոգեբանի/հոգեբույժի կողմից տրված եզրակացություն կամ դիմողի՝ ինքնասպասարկման ունակություն չունենալը հաստատող փաստաթղթեր։

13. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր դիմողի համար ծառայությունում բացվում է անձնական գործ։

4. **ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ**

14.Դիմումն ընդունելիս, ծառայության աշխատակիցը դիմողին բանավոր ծանոթացնում է փոխհատուցման ընթացակարգին, միաժամանակ նրան տրամադրելով գրավոր տեղեկատվություն, որում համառոտ ներկայացված են ծրագրին մասնակցելու պայմանները, և փոխհատուցումը դադարեցնելու հիմքերը։

15. Փոխհատուցում ստանալու վերաբերյալ դիմումը և դրան կցված փաստաթղթերը, սույն հավելվածի 10-րդ կետում նշված հարցումների պատասխանները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են ծառայության պետին։
16. Ծառայության պետը երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում դիմողին փոխհատուցում տրամադրելու կամ փոխհատուցման տրամադրումը մերժելու մասին։
17. Փոխհատուցում տրամադրելու կամ փոխհատուցման տրամադրումը մերժելու մասին որոշման մասին ծառայությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմողին, մերժման դեպքում՝ նշելով մերժելու պատճառը և որոշումը բողոքարկելու կարգը։
18. Յուրաքանչյուր դիմումատուին տրամադրվող փոխհատուցման չափը կազմում է ամսեկան 60,000 ՀՀ դրամ։ Փոխհատուցումը տրամադրվում է ընտանիքին՝ անկախ ընտանքի անդամների թվից։

19. Փոխհատուցումը տրամադրվում է բանկային փոխանցումով: Փոխհատուցումը չի կարող տրամադրվել դիմողի ներկայացուցչին՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգով խնամակալության ներքո գտնվող անձի խնամակալի:
20. Փոխհատուցումը տրամադրվում է 6 ամիս ժամկետով՝ փոխհատուցումը տրամադրելու մասին ծառայության որոշման ընդունմանը հաջորդող օրվանից սկսած:

5. **ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ**
6. Փոխհատուցման տրամադրումը դադարեցվում է եթե.

1) դադարեցվել է դիմողի փախստականի կարգավիճակը՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված հիմքերով.

2) դիմողը օգտագործել է փոխհատուցումը ոչ նպատակային.

3) դիմողը մեկնել է Հայաստանի Հանրապետությունից

4) դիմողն ընդգրկվել է կացարանով ապահովման որևէ պետական կամ միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրում։

22. Փոխհատուցման տրամադրումը դադարեցնելու մասին ծառայությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմողին:

6. **ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՈՒՄԸ**
7. Փոխհատուցման ստանալու մասին դիմումները, ըստ դրանք ներկայացնելու ժամկետների, ծառայության կողմից գրանցվում են փոխհատուցում ստանալու համար դիմողների գրանցամատյանում (այսուհետ՝ գրանցամատյան):
8. Գրանցամատյանում նշվում են դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, սեռը, քաղաքացիությունը, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած լինելը հավաստող փաստաթղթի համարը, փոխհատուցման ստացման դիմումին կից ներկայացված փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետությունում փաստացի բնակության վայրը, հեռախոսահամարը, փոխհատուցման տրամադրման մասին որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:
9. Յուրաքանչյուր տարվա վերջում գրանցամատյանը կարվում է, կնքվում ծառայության աշխատակազմի կլոր կնիքով և պահվում ծառայությունում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում:

7. **ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ**
8. Դիմողը փոխհատուցման տրամադրման մասին որոշումը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ծառայությանը տրամադրում է բնակարանի վարձակալության վերաբերյալ պայմանագրի պատճեն (առկայության դեպքում), կամ հայտնում է վարձակալած բնակարանի հասցեն և բնակարանի սեփականատիրոջ կոնտակտային տվյալները: Վարձակալած բնակարանի փոփոխության դեպքում դիմողը պարտավոր է նույն տեղեկությունները յոթ աշխատանքային օրվա ընթացքում հայտնել ծառայությանը:

27.Փոխհատուցման նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ծառայության աշխատակիցների կողմից իրականացվում է մշտադիտարկում՝ առնվազն ամիսը մեկ անգամ վարձակալած բնակարաններ այցելությունների, հեռախոսազանգերի և պետական այլ մարմինների տեղեկատվական շտեմարաններից տեղեկատվություն ստանալու ճանապարհով: Բացի այդ, փոխհատուցման հերթական փոխանցումից առաջ երեք աշխատանքային օրերի ընթացքում դիմողը պարտավոր է ներկայանալ ծառայություն, ինչն անհրաժեշտ է դիմողի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստի հաստատման համար: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ գրավոր արձանագրությունը կցվում է դիմողի գործին: Երեք օրվա ընթացքում ծառայություն չներկայանալու դեպքում ծառայության կողմից ընդունվում է կասեցման որոշում և փոխհատուցումը չի փոխանցվում, բացառությամբ այն դեպքերի երբ դիմողը ներկայացնում է սահմանված ժամկետում իր չներկայանալը հիմնավորող հարգելի պատճառներ:

28. Դիմողի կողմից փոխհատուցման նպատակային չօգտագործումը բացահայտելու դեպքում, ծառայության պետի կողմից երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունվում է որոշում փոխհատուցման տրամադրումը դադարեցնելու մասին:
29. Փոխհատուցման տրամադրման մասին որոշումը դիմողին հանձնելիս, ծառայությունը միաժամանակ նրան տեղեկացնում է փոխհատուցումը նպատակային չօգտագործելու հետևանքների՝ 21-րդ կետով սահմանված փոխհատուցման տրամադրումը դադարեցնելու մասին:
30. **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**
31. Փոխհատուցման տրամադրման ֆինանսական գնահատականը ներառում է հետևյալը՝

1) Շահառուների ընտրություն -0 դրամ

2) Ժամանակավոր կացարանի տրամադրման իրականացման ապահովում-14.4 մլն դրամ

ՀՀ-ում տարեկան միջին հաշվով փախստական են ճանաչվում և ապաստան են ստանում շուրջ 150 անձ: Իրատեսական է նշված անձանց մեկ երրորդի տեղավորումը Սոցիալական տներում: Մնացած 100 անձի (շուրջ 40 ընտանիք) համար բնակարանների վարձակալության փոխհատուցման համար տարեկան անհրաժեշտ կլինի 14.4 մլն դրամ (40 x 60.000 x6):

ՁԵՎ N 1

ԴԻՄՈՒՄ

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես՝

_____,

(անունը, հայրանունը, ազգանունը)

20—— թվականի --------- -----ին Հայաստանի Հանրապետության կողմից ինձ և (կամ) ընտանիքիս հետևյալ անդամներին, և (կամ) իմ խնամարկյալին (անհրաժեշտն ընդգծել) տրվել է փախստականի կարգավիճակ և ապաստան՝

_____

Ժամանակավոր կացարանով ապահովման խնդրի լուծման նպատակով խնդրում եմ տրամադրել փոխհատուցում:

Կցվում է

1. Ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերը

2. Միասնական սոցիալական ծառայության տարածքային մարմնի կողմից տրված ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում հաշվառված լինելու և անապահովության 0-ից բարձր միավոր ունենալու վերաբերյալ տեղեկանքը:

ԴԻՄՈՂ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.